



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

0009 ք. Երևան, Կորյուն 17

«19» սեպտեմբերի 2022թ.

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Դատավորի լիազորությունները դադարելու վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորի լիազորությունները դադարում են, եթե նա մահացել է:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով դատավորի լիազորությունները դադարում են նրա մահվան օրը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերով նախատեսված հիմքերով դատավորի լիազորությունները դադարելու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նախագահին անհապաղ հայտարարություն է տարածում դատական իշխանության պաշտոնական կայքում:

Ելնելով վերոգրյալից՝ հայտարարվում է, որ Բարձրագույն դատական խորհրդի 19.09.2022 թվականի թիվ ԲԴԽ-88-Ո-285 որոշմամբ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր Արծրուն Միրզոյանի մահվան հիմքով վերջինիս լիազորությունները 15.09.2022 թվականից համարվել են դադարած:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ս. ՉԻՉՈՅԱՆ